

ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալը մասնակցել է Արփի համայնքի ղեկավարի 2014 թվականի գործունեության վերաբերյալ հաշվետվությանը, 18.03.2015



Մարտի 17-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Սամվել Թարվերդյանի մասնակցությամբ Արփիի համայնքապետարանում տեղի ունեցավ համայնքի ղեկավար Գրիգոր Գրիգորյանի 2014 թվականի գործունեության վերաբերյալ հանրային հաշվետվությունը:

Ներկայացվեց գյուղապետարանի 2014 թվականի ընթացքում կատարած աշխատանքները: Ներկայացվեց նաև 2015 թվականին իրականացվելիք ծրագրերի և անելիքների մասին:

Նիստին մասնակցում էին համայնքի ղեկավարի աշխատակազմը, համայնքի ավագանու անդամները, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարներ, համայնքի բնակիչներ:

Քննարկման ժամանակ բարձրացվեց գյուղի մանկապարտեզում առկա շինարարական, սանիտարա-հիգիենիկ թերությունների վերացման, գյուղի 10 բնակարանների վրայով անցնող բարձրավոլտ լարման հոսանքի էլեկրասյունների վթարային վիճակի վերաբերյալ հարցերը: Առաջարկություն եղավ գյուղում կազմակերպել բույսերի մշակության և հիվանդությունների կանխարգելման ու բուժման վերաբերյալ անհրաժեշտ խորհրդատվություն:

Ավագանին համայնքապետի տարեկան գործունեությունը գնահատեց բավարար: